



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
16 հուլիսի 2024 թվականի N 270-Ա

«ՎԱՂԱՏՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԱԶԴԱՏ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՄՀԵՐ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ
կետով, Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային
կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ
հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով և հիմք ընդունելով Մ. Առաքելյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. 2024 թվականի հուլիսի 17-ից լուծել «Վաղատուրի միջնակարգ դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարազդատ Խաչատրյանի հետ
2022 թվականի մարտի 4-ին կնքված N 12 աշխատանքային պայմանագիրը:

2. 2024 թվականի հուլիսի 17-ից «Վաղատուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ
առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել
Մհեր Առաքելյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակեր-
պության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված
մասնակցի կողմից զբաղեցնելը:

2024-07-16 16:22:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք. Կապան

